ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

Բրև ռազմա-հաղթական բախտորոշ իրադարձություններ պատերազմները միշտ համապատասխան արձագանք են գտել տարբեր ազգերի լայն խավերի բանաստեղծությունում: Այստեղ ավելի կամ պակաս չափով անդրադարձել են պատերազմների կարևոր դեպքերն ու դեմքերը, ժողովրդի վերաբերմունքը դրանց հանդեպ: Որքան ավելի տևական, ծանր է եղել պատերազմը, այնքան ավելի խորն են եղել և նրա հետքերը ժողովրդի մտաշխարհում, բառ ու բանի մեջ:

Հիտլերյան ֆաշիստների դեմ Սովետական Միության մղած Հայրենական մեծ պատերազմը այս առումով առանձնապես խոր հետքեր թողեց սովետական բոլոր ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի բանավոր ստեղծագործության մեջ: Մեծ Հայրենականի տարիներին Հայաստանի գյուղերում ու քաղաքներում, ռազմի դաշտում գտնվող հայ մարտիկների միջավայրում ստեղծվեցին ու տարածում գտան բանահյուսական տարբեր տիպի ստեղծագործություններ:

Ինչպես սովետահայ բանահյուսության մեջ ընդհանրապես, այնպես էլ պատերազմի տարիների հայ բանահյուսության մեջ, առաջին հերթին լայնորեն օգտագործվեցին ավանդական բանահյուսության մի շարք տարածված ստեղծագործություններ, ժանրեր (ժողովրդական երգեր, խաղիկներ, վիպերգեր, անեծքներ, անեկդոտներ), վերջիններիս հատուկ արտահայտչական միջոցներ (տաղաչափական ձևեր, հանգավորման եղանակներ, երաժշտական մեղեդիներ, բանաստեղծական պատկերավորման հնարներ): Դրա հետ միասին հորինվեցին ոչ միշ թվով նոր տիպի ստեղծագործություններ (ինքնուս բանաստեղծների ոտանավորներ, գուսանական նորոգ տաղեր, ասքեր, երկխոսություններ և այլն):

Հայրենական պատերազմի տարիների հայ բանահյուսությունը մեր ժողովրդի պատերազմական շրջանի կյանքի ու պայքարի, ապրումների ու մտորումների յուրօրինակ տարեգրությունն է: Նրա հիմնական թեման ռազմաճակատում տեղի ունեցած պատմական կարևոր իրադարձություններն են, իսկ գլխավոր հերոսը՝ ռազմի դաշտում Սովետական Միության մյուս ազգությունների զավակների հետ ընդհանուր թշնամու դեմ անձնուրաց մարտնչող հայ զինվորն ու զորավարը: Այդ զինվորների ու զորավարների կատարած ռազմական սխրանքներին, նրանց ցուցաբերած արիության ու հերոսության բնութագրմանն ու դրվատմանն են նվիրված բանահյուսական չափածո ու արձակ բազմաթիվ նմուշներ: Ժողովուրդը պատերազմի ողջ ընթացքում ուշի-ուշով հետևել է իր զավակների քաջագործություններին, ծնողական սրտաբուխ խոսք ասել նրանց հասցեին: Ռազմի դաշտում իրենց մարտական գործերով աչքի

ընկած շաբաթային մարտիկներից ու հրամանատարներից շատերի մասին նա նյութեր է պարծանքով ու երախտագիտությամբ համակված շատ ստեղծագործություններ:

Ժամանակակից հայ գուսաններն ու ժողովրդական երգիչները առանձնապես շատ երգեր ու տաղեր են նվիրել Հայրենական պատերազմի հայազգի նշանավոր զորավարներից մեկին՝ Հովհաննես Բաղրամյանին: Հպարտության բարձր զգացումով նրանք պատմել են իրենց մեծանուն հայրենակցի մարտական սխրանքների մասին, գովերգել են՝ «Սյունյաց ժայռոտ լեռների դյուցազնին», թշնամուն «կարկուտից սաստիկ ջարդ տվող», «բաչատոհմիկ» զորավարին, վերհիշել նրա կյանքի ուշագրավ դրվագները, արձանագրել են այն ուրախությունն ու խուճապը, որ պատճառել են նրա բանակները Հիտլերին.

Բաղրամյանը կանչեց՝ «առա՛ջ»,
Հիտլերն ընկավ լաց ու հառաչ...[1]:

Վիշապաբաղ Վահագնին հիշեցնող իր մեծ սխրանքներով դրվատման առանձնահատուկ առարկա է դարձել խիզախ օդաչու Նելսոն Ստեփանյանը.

Ամպի միջից կայծակեցիր,
Կարկուտ ու շանթ արձակեցիր,
Թշնամու դեմ մահ ցանեցիր,
Հերոս Նելսոն, հայի զավակ:

Ժողովրդական գուսանների տաղերում հիշատակվում են նաև անվանի կապիտան Արամ Միրզոյանի ռազմաճակատում կատարած բազմաթիվ քաջագործությունները.

Զենիթ ձեռքիդ թշնամու դեմ,
Կանգնել ես դու անառիկ վեմ.
Քաջությունդ պիտի գովեմ
Կապիտան Արամ Միրզոյան...

Հատուկ երգ է նվիրվել Ռոստովի արյունահեղ մարտերի եռանդուն մասնակից գնդապետ Ղուկաս Մաղոյանին՝ հայրենիքին ու հարազատներին նրա տված կարևատև այցելության առիթով.

Հայ ժողովուրդ ուրախացեք,
Հաղթանակի լուր է եկել.
Գիմավորեք ու ցնծացեք,
Մաղոյանը հյուր է եկել...

---

[1] Այս և հաջորդ բոլոր մեջբերում-նմուշները քաղված են պատերազմի տարիներին մեր և ուրիշների՝ Երևանում, Էջմիածնում և Հայաստանի այլ շրջաններում գրի առած անտիպ նյութերից (ներկայումս դրանք պահվում են Հայաստանի ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության բաժնի արխիվում), մասամբ էլ 1942 թ. Երևանում հրատարակված «Հայ աշուղները և հորինողները Հայրենական պատերազմի օրերին» ժողովածուից:

Հայրենական պատերազմի շրջանի հայ բանահյուսության ուշագրավ ստեղծագործություններից են սովետական բանակի շարքերում թշնամու դեմ կռվող հայազգի մարտիկների հարազատների կողմից կամ վերջիններիս անունից հորինված երգերը: Անպանույշ, պարզ, բայց և միաժամանակ շատ անկեղծ բանաստեղծական մանրանկարներ են դրանք, ապրած հույզերի, փայփայած հույսերի անիարդաիւ վավերականներ, սիրո կրակով ջերմացած և վշտի արցունքներով ցողված բնաբերգության նմուշներ: Իբրև բաժանման ու կարոտի ստեղծագործություններ, այդ երգերը բնականորեն զերծ չեն տխրության, թախծի շեշտերից: Նրանց մեջ միաժամանակ առկա է ժողովրդին հատուկ լավատեսությունը, որը թև է տալիս ընկնված հոգիներին, սպեղանի դառնում վիրավոր սրտերին:

Հայրիկս բանակ գնաց,
Բանակին մեռնեմ.
Գրել էր ինձ մի նամակ,
Նամակին մեռնեմ,— երգել է նակատայինի զավակը:

Խաղողի վազին մեռնեմ,
Գինու կուրասին մեռնեմ.
Բանակ գնացած յար ջան,
Սրտիդ մուրազին մեռնեմ,— երգել է մարտիկի սիրած աղջիկը:

Բնորոշ են նաև զինվորների երիտասարդ կանանց երգերը, ուր դրսևորված են նրանց ապրումները ու մտորումները, ընդհատված երջանկության քաղցր վերհուշը, ամուսնու՝ պատերազմից հաղթանակով, ողջ-առողջ վերադառնալու ավետաբեր լուրի պատճառած խնդությունը.

Ցնծությամբ լցվեց այսօր տունը մեր,
Այսպիսի մի օր էլ ամեհիդ լիներ.
Ստացա նամակ մեծ, ավետաբեր,
Խնկությամբ բացի, կարդալով լացի,
Երգելով մնացի, գալու է յարս...:

Զգացմունքի անմիջականության, ժողովրդական երգերի ավանդական արտահայտչամիջոցների, պատկերների ու մեղեդիների հաջող օգտագործման շնորհիվ հիշյալ երգերը օժտվել են զգալի վարակիչ ուժով:

Ավելի ջերմ և առավել հուզիչ են մայրական երգերը, որոնք կրում են ռազմի արյունահեղ մարտերում գտնվող հարազատ զավակներին հասցեագրված բանաստեղծական օրհնանք-բարեմաղթությունների, ի խորոց սրտի բխած բնական անկեղծ զեղումների բնույթ: Այդօրինակ երգերի գեղեցիկ նմուշ է հետևյալ քառյակը.

Միրանի ընեի՝
Ճամփիդ բուսնեի.
Էնքան չմեռնեի, բալա ջան,
Գալը տեսնեի:

Պատերազմի շրջանի հայ բանահյուսության մեջ նշանակալից տեղ են գրավում թշնամու վերաբերյալ ստեղծագործությունները: Եվ դա բնական է: Այդ ստեղծագործությունների միջոցով ժողովուրդն արտահայտել է իր ատելության, վրեժի բուռն զգացմունքները՝ իրեն հաջ ծանոթ գեղասպանների նորօրյա հետնորդների նկատմամբ: Հիշյալ ստեղծագործությունների մեջ առանձնապես շատ են պատերազմի մոլեռանդ ոգեկոչողին ու կազմակերպչին՝ «չուն» Հիտլերին, հասցեագրված շափածո անեծքները: Այստեղ տեղին ու դիպուկ կիրառված են դարերի ընթացքում ժողովրդի ստեղծած ամենաթունոտ ու ոչնչացնող պարսավարարները, ածականները ու մակդիրները:

Իրեն և յուրայիններին պատհառած անփոխարինելի կորուստների ու խոր վերքերի համար հայ գեղջկուհին ցանկանում է կարմիր գնդակից խոցված տեսնել Հիտլերին.

Փեշս լցնեմ փոշին,
Տանեմ թափեմ շոշին.
Կարմիր գլուլեն դիպնի՝
Շուն Հիտլերի դոշին:

Մի ուրիշ անգամ նա տենչում է, որ կրակի հարուկ դառնա ֆաշիստների ճիվաղ պարագլուխը, նրան զուգորդելով պատին սողացող օձի հետ.

Պատի վրի օձը,
Պատի վրի օձը.
Հիտլերի ջանն ընկնի՝
Կրակ ու բոցը:

Նույն բանի համար հայ գուսանը 1942 թ. իր նզովքն է հյուսել Հիտլերին հասցեին, ուր, ի միջի այլոց, ասված է.

Ջանդակող բոռոտվի ու լեշող հոտի,
Մրմուտից ու ցավից խելառվես, Հիտլեր.
Ջանիդ միսը փտի, լխկի, որդնոտի,
Երժոխքի կրակով միշտ վառվես, Հիտլեր:

Քոր մեջքդ կրակով վառեմ ու դաղեմ,
Յարոտված ջանդակդ մրմռա՝ աղեմ,
Սղունգներդս սրեմ, բրկումդ թաղեմ,
Ցատկես, մղկտաս ու ծալվես, Հիտլեր:

Աղինջի փշերից վերմակ կարեմ քեզ,
Մասուրի ոլերից դոշակ կարեմ քեզ,
Սև ոգնու փշերից ես բարձ կարեմ քեզ,
Որ պառկես, տրորվես ու հալվես, Հիտլեր...:

Պատերազմի շրջանի հայ բանահյուսության մի շարք երգ-բանաստեղծություններ նվիրված են 1942 թ. մայիս ամսին Ղրիմի թերակղզու Կերչ քա-

դամում. Սև ծովի ափին, ինչպես նաև Դոնի Ռոստովում ֆաշիստական բանակների դեմ սովետական զորքերի մղած մահու ու կենաց նակատամարտերին, որոնց մեջ ի շարս այլ ազգերի ներկայացուցիչների, ինչպես հայտնի է, մասնակցություն ունեին նաև հայ մարտիկներն ու հրամանատարները: Թե՛ իրենց բովանդակությամբ և թե՛ երաժշտական մեղեդիներով հիշյալ ստեղծագործությունները բնդհանուր առմամբ մոայլ բնույթի են: Նրանց մեջ վերարտադրված են բեժ մարտերի առաջին գծում գտնվող զինվորների ու հրամանատարների ֆիզիկական և հոգեկան ուժերի մեծ լարվածությունը, մարդկային անհամար զոհեր կլանող արյունահեղ ծանր մարտերը, վիրավոր մարտիկների տառապանքները, կատարած անձնազոհության ու հերոսության արվագները: Այսպես. հարազատ մորը պատերազմի դաշտից ուղղված իր նամակում հայ զինվորը գրում է.

Սև ծովի ափին, մայրիկ ջան
Փրփուր չի բռնում.
Իմ գրած նամակը, մայրիկ ջան
Քեզի չի հասնում...:

Մի ուրիշ մարտիկ թախանձում է յուրայիններին մորից գաղտնի պահել իր վիրավորված լինելու հանգամանքը.

Կերչ քաղաքը քար ու քրա,
Գյուլլեն մեջը կը ֆրֆրա.
Ոտիս յարեն կը մրմրա,
Ձասեք մորս, վիրավոր եմ...:

Իսկ Ռոստովի մատույցների կատաղի կռիվներին մասնակից մարտիկի անունից հորինված մի երգի մեջ մենք գտնում ենք Դոն գետին՝ իբրև չնչավոր արարածի ուղղված հետևյալ դիմում-աղերսանքը.

Ազովի հետ դու կապ ունես,
Հրնգից-վեցը հուղեր ունես,
Պանդուխտ մարդկանց դու խնայես,
Դիշերով անցա Դոն, բեզի...:

Լինելով հիմնականում ծանր տրամադրությունների արգասիք, ճչված երգ-բանաստեղծությունները միաժամանակ ներթափանցված են գիտակցված մահվան տարրերով: Դրանով նրանք տարբերվում են 1914 թ. իմպերիալիստական պատերազմի տարիներին հորինված «սալդաթի» խաղերից:

Այս առումով բնորոշ են հետևյալ երկու երգերը:

1914 թ. ստեղծված «Արտաշի երգում» վիրավոր զինվորը անհույս վիճակում միայն դառնորեն ողբում է իր և ընտանիքի անելանելի վիճակը.

Հերս ու մերս բունդրա բոցին,
Սիրած յարիս ձեռքը ծոցին.

Նորամանուկ օրորոցին,
Հարայու եմ, դառնայու չեմ:

1942 թ. ստեղծված հայտնի «Կերչի երգում» վիրավոր զինվորը մխիթարում է հարազատ մորը, որ ինքը զուր չի զոհաբերել կյանքը.

... Կերչի նակատում, մայրիկ ջան
Վիրավորվեցի.
Հայրենիքի պատվի համար
Ծովը նետվեցի:

Հայրենական պատերազմի շրջանի մի ուրիշ երգի մեջ ծանր վիրավոր մարտիկը մխիթարվում է նրանով, որ իր կյանքը տալիս է յուրայիններին փրկության գործին.

Դիրքիս մեջը մութ ու խավար,
Լուսնյակ վերևիցը կամար,
Ես մեռնում եմ ձեզի համար...:

Հերոսի բոլորանվեր անձնազոհությունը բացահայտող խոսուն ստեղծագործություն է այն բանաստեղծություն-երգը, որ նվիրված է հետմահու Սովետական Միության հերոսի բարձր կոչման արժանացած Հունան Ավետիսյանին:

... Ունանը կովում ընկավ, մայրիկ ջան,
Թափվեց արյունը,
Էն էր ումուղդ, մայրիկ ջան,
Քո սրտի սունը:
... Մի՛ լա մայրիկ, մի՛ լա հոյրիկ
Քաջ էր Ունանը:
Հայրենիքի հողի համար
Զոհ էր Ունանը...:

Առավել նշանակալից է սովետական ժողովրդի մղած Հայրենական անեղ պատերազմի հաղթական ավարտի անխուսափելիությունը հավաստող հետևյալ գուսանական տաղը, ստեղծված պատերազմի ամենածանր օրերին (1942 թ.), որի հեղինակը սովետահայ ամենատաղանդավոր գուսաններից մեկն է՝ մանկությունից զույգ աչքով կույր ծերունազարդ Աշխույժը: Թեև երգը իր լեզվով, ոճով ու պատկերային մտածողությամբ մոտիկից հիշեցնում է գրական բանաստեղծություն, սակայն տաղաչափական ընդհանուր կառույցով, ռիթմական չափով ու հանգավորման եղանակով տիպիկ գուսանական տաղ է:

Հարխային լավան ձնով չի մարվի,
Միշտ կը ժայթքի լեռան կրծքից, կվառվի.

Քամին որան էլ որ կաղնուն պինդ փարվի,
Կաղնին հաստատ, փարթամ ծառ է, չի մեռնի:

. . . . . .

Աշխույժ, ձմռան ձյունը շուտով կը հալվի,
Գարունը կը գա և աշխարհը կը զմայլվի.
Ֆաշիստների լեզուն հավետ կը լալվի,
Կը հաղթենք, մեր գործն արդար է, չի մեռնի:

Նշված ստեղծագործություններից բացի պատերազմի տարիներին ինչպես Սովետական Միության մյուս հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում նկատելի տարածում գտան բանահյուսական ուրիշ հորինվածքներ ևս: Մեր խոսքը հակաֆաշիստական անեկդոտների մասին է: Ի տարբերություն բանավոր ծագում ունեցող հիմնականում ազգային, երբեմն էլ զավառային հնօրյա անեկդոտների, հիշյալ հորինվածքները գերազանցապես «ազգամիջյան» տարածում ունեցող և տպագիր աղբյուրներից (թերթ, գիրք) սերող ստեղծագործություններ էին, որոնք իրենց այժմեական բնույթի պատճառով բանահյուսական կերպափոխման ենթարկված՝ սկսեցին բերանից-բերան անցել մեր հասարակության տարբեր խավերում, հատկապես մտավորականության միջավայրում: Հնօրյա անեկդոտների համեմատությամբ հակաֆաշիստական անեկդոտները ունեին այլ, ոչ պակաս կարևոր տարբերություններ ևս: Մինչդեռ հները գերազանցորեն շոշափում էին սոցիալական, կրոնական և կենցաղային խնդիրներ, տոգորված մեծ մասամբ հումորով, նորերը, սակավ բացառությամբ, արծարծում էին ռազմական ու քաղաքական թեմաներ, օգտվելով հիմնականում ժողովրդական բունոտ երգիծանքի զինանոցից: Ընդհանուր հնօրյա և նորոգ անեկդոտների մեջ նրանց փոքր ծավալն է և ժանրային այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ գործող անձանց իրական կյանքից առնված լինելու հանգամանքը, գործողության անակնկալ լուծումը, «պայթուցիկ» վերջավորությունները, հկուն ու սուր ոճը, կարճ ու կտրուկ երկխոսությունները, հնչյունային ու բառային խաղերը:

Հայրենական պատերազմի տարբեր տարիներին հորինված հակաֆաշիստական անեկդոտները ունեն բովանդակության բազմազան մոտիվներ: Նրանց համար նյութ են ծառայել ֆաշիզմի պարագլուխների, առաջին հերթին տխրահռչակ ֆյուրերի, բնավորությամբ, կյանքի ու վարքագծի տարբեր կողմերը, նրա աշխարհակալական անզուսպ նկրտումները, ոչ արիական ազգերի, մասնավորապես հրեաների նկատմամբ ունեցած ատելությունը և այլն: Քիչ անեկդոտներ չեն ստեղծվել նաև ֆաշիստական բարձրաստիճան զորավարների, շարքային զինվորների, երիտասարդ ու տարեց գերմանացիների ու գերմանուհիների, ռուսական նակատում տեղի ունեցող պատերազմական իրադարձությունների մասին և այլն:

Բերենք մի քանի օրինակ միայն.

1. Փարիզ մտնելուն պես Հիտլերը գալիս է Նապոլեոնի գերեզմանի մոտ և պոռոտախոսորեն ասում.

— Վե՛ր կաց, տե՛ս, ոնց եմ աշխարհը ոտքի տակ տվել:

Նապոլեոնը գերեզմանից հարցնում է.

— Ռուսաստանն է՞լ ես գրավել:

— Դեռ չէ, բայց...

— Որ այդպես է, արի պառկի կողքիս[2]:

2. Մի պառավ գերմանուհի իր հարևանուհուն ասում է.

— Երազումս տեսա, որ ձուկը սովից փրկեց Գերմանիան:

— Մի՞թե այդքան շատ ձուկ էր ստացվել:

— Օ՜ ո՛չ, ես տեսա, թե ինչպես Հիտլերը խեղդվեց ձկան փշից.

3. — Ինչո՞ւ չեմ հագնում ձեր ամուսնու Ամոլենսկից ուղարկած շորը,— հարցնում է գերմանուհին հարևանուհուն:

— Հազածս հենց այդ շորն է:

— Ինչպես, չէ՞ որ այն բաց կապույտ գույնի էր:

— Այո, բայց... հետո ես սև ներկեցի:

Հրամանները զրված զինվորական օրագրերի ու նամակների նման, պատերազմի տարիների ժողովրդական երգերը, վիպերգերը. անեծքները, անեկդոտները, գուսանական տաղերը, ինքնուս հորինողների ոտանավորները աչքի են ընկնում իրենց փոքր ծավալներով, ոչ միշտ ավարտուն ու մշակված ձևով: Դրանք մե՛րթ տագնապալից են ու տխուր, մե՛րթ զվարթ ու առնական: Գնահատելին այդ ստեղծագործությունների մեջ ոչ այնքան նրանց գեղագիտական առավելություններն են, որքան՝ պատմա-ճանաչողական արժեքը:

Աշխարհելով տարբեր խնդիրներ և օգտագործելով տարբեր ժանրեր, արտահայտչական միջոցներ ու մեղեդիներ, հիշյալ ստեղծագործությունները ունեն մի ընդհանուր ոգի ու առաջնորդող գաղափար: Դա սովետական ժողովրդի՝ իր առաքելության արդարացիության և վերջնական հաղթանակի նկատմամբ ունեցած հավատն է: Այդ է պատճառը, որ չնայած թշնամու ռազմական մեքենայի հզորությանը, նրա դաժանությանն ու ցեղասպանական մոլուցքին, պատերազմի տարիների հայ բանահյուսության ստեղծագործությունների զգալի մասը տոգորված է լավատեսությամբ, թշնամու նկատմամբ հաղթության, արհամարհանքի, քունոտ ծաղրի, սովետական մարտիկների աննձագոհության ու հերոսության հարազատ մոտիվներով:

---

2 *Այս և հաջորդ անեկդոտները 1941—1942 թթ. լսել ենք Երևանում, բանավոր աղբյուրներից:*